



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 280219: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 93-Ն

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով. **որոշում է՝**

1. Հաստատել Արտաշատ համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը /կցվում է/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -11

Դեմ -0

Չեռնալահ -0

1. ԱՆԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

3. ԳԱԼՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

5. ԽԱԶԱՏՐՅԱՆ ԿԱՍՈ

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԶԱՆ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

8. ՄԱՅՍԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

9. ՆԱԶԱՐՅԱՆ ԳՈՐ

10. ՆԱԶԱՐՅԱՆ ՀԵՐԻԲԵՆԱԶ

11. ԴՈՂՈՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ՝  ԱՐԳԱՍ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Համայնքի ղեկավար՝



Ա. Արահամյան



Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի
21-ի թիվ 93-Ն որոշմամբ

Ա Ր Տ Ա Շ Ա Տ 2016 ԹՎԱԿԱՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի բնութագրում /տեքստային նկարագրում.

1995թ. վարչատարածքային ռեֆորմից հետո Արտաշատը հանդիսանում է Արարատի մարզի մարզկենտրոնը: Արտաշատը գտնվում է Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի միջպետական նշանակության ճանապարհի վրա՝ Երևան քաղաքից 30 կմ հարավ-արևելք: Քաղաքը տեղադրված է միջին արաքսյան գոգավորությունում՝ ծովի մակարդակից 830-840 մ բարձրության վրա:

Կլիման չոր, կտրուկ, ցամաքային է՝ ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով: Ձմեռը սկսվում է դեկտեմբերի կեսերից: Հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է 5⁰-ից 6⁰: Նվազագույնը դիտվել է 32⁰-ից 39⁰:

Ամառը տեական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր: Օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24⁰-ից 26⁰-ի, իսկ առավելագույնը՝ 42⁰: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը մոտ 30 մմ է: Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը 61 % է, հունվարին՝ 80% , հուլիսին՝ 45%:

Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտների: Ագրոկլիմայական տեսակետից համայնքը ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Ունի օգտակար հանածոներ:

Դրանցից առավել նշանավոր են կավի պաշարները: Բացի այդ՝ կան նաև ստորգետնյա ջրերի պաշարներ:

1897թ-ին բնակավայրն ունեցել է 833, 1926թ-ին՝ 2505, 1939թ-ին՝ 4148, 1959թ-ին՝ 7277, 1976թ-ին՝ 16774 բնակիչ: Ըստ ազգային վիճագրական տվյալների՝ համայնքի բնակչությունը 2016թ.-ի հունվար ամսի տվյալներով կազմում է 27406 մարդ, որից 46 %-ը տղամարդիկ են, իսկ 54%-ը կանայք:

Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 24%, աշխատունակը՝ 62 %, հետաշխատունակները՝ 14 %:

Արտաշատ համայնքն ունի 6 հանրակրթական դպրոց, 7 մանկապարտեզ, 1 մարզադաշտ, 2 մարզադպրոց, երաժշտական դպրոց, մշակույթի պալատ, թատրոն, հիվանդանոց, ծննդատուն:

Արտաշատն ունի զարգացած գյուղատնտեսություն, որը մերձքաղաքային տնտեսության ուղղվածություն ունի: Այն գյուղմթերքներ է մատակարարում մայրաքաղաքին: Համայնքն ունի 1474 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում՝ 872 հա վարելահող, 277,3 հա պտղատու և խաղողի այգիներ:

Նոր զարգացում է ապրում նաև արդյունաբերությունը, հատկապես գյուղատնտեսական ապրանքների վերամշակման, շինարարական ապրանքների արտադրության ուղղությամբ:

- Համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Աղյուսակ 1. Համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

№	ԿԱՌՈՒՅՑ	ՀԱՍՑԵ	ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԱՐԵԹԻՎ	ՄԱԿԵՆՇՄԸ ՄՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՄԱՌՈՂՓՄԱՆ, ՓՈՒՍՏՐՆՄԱՆ ԿԱՐԻՔ	ՍՅՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐՆՆԱԿԸ
1	Համայնքապետարանի վարչական շենք	Օգոստոսի 23/62	1979թ.	2619.5	Շենքը շահագործվում է 1977 թվականից, հիմնովին նորոգվել է 1-6 հարկերը, մյուս հարկերը նորոգման կարիք ունեն	նորոգման կարիք ունի	
2	Նախկին «Բասկով» ՊՏԳՁ վարչական շենք	Օգոստոսի 23/70	1960թ.	372,1	Շենքը նպատակին չի ծառայում, վերածվել է հանրակացարանի	Վերակառուցման կարիք ունի	
3	«Արտադրարկային աշխատանքների կենտրոն»-ի շենք	Օգոստոսի 23 փողոց	1978թ.	1500	Վերանորոգման կարիք ունի ուսումնական մասնաշենքը և հանդիսությունների դահլիճը	նորոգման կարիք ունի	
4	Բազմաբնակարան բնակելի շենքեր	Քաղաքային համայնքի տարածքում	1969թ-ից սկսած 1990թ.	104000	128բազմաբնակարան բնակելի շենքերից 80-ի տանիքների ազդեցիկները ջարդվել, փշրվել են: շարքից դուրս են եկել ջրհերդանները	Ենթակա են հիմնավոր վերանորոգման	
5	«Մելիք Փաշանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենք	Մարքսի փողոց	1970թ.	3810	Վերանորոգված է: Կան բոլոր պայմանները շենքը նորմալ շահագործելու համար: Կան առանձին թերություններ, որոնք մասնակի վերանորոգման կարիք ունեն	Ենթակա են մասնակի վերանորոգման	

6	«Քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	Նար-Ռոսի փողոց	1976թ.	7064, 4	Վերանորոգված է տանիքը, սանհանգույցները, կառուցված է ջեռուցման համակարգը, ընթացքի մեջ են շենքի ներքին հարդարման աշխատանքները	Ներքին հարդարման կարիք ունի
7	«Քաղաքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	Շահումյան փողոց	1968թ.	831,0	Շենքն ամբողջությամբ վերանորոգված է	-
8	«Քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	Գուլեցյան		4271, 0	Մանկապարտեզը տեղավորված է 2 մասնաշենքերում: Մասնաշենքերից գլխավորը հիմնովին վերանորոգված է, մյուս հիմնովին նորոգման կարիք ունի	2-րդ մասնաշենքը հիմնական նորոգման կարիք ունի
9	«Քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	ՀՐ. Թովմասյան փողոց	1976	5900	Մանկապարտեզն ունի 2 մասնաշենքեր: Վերանորոգվել են կցակառույցի տանիքը	Վերենորոգման խիստ կարիք ունի խոհանոցը և 2-րդ մասնաշենքի տանիքը
10	«Քաղաքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	Արազի փողոց	1982թ.	2890	Շենքը մասնակի վերանորոգվել է, կցակառույցի տանիքը վերանորոգման կարիք ունի	Կցակառույցի տանիքը ենթակա թ հիմնավոր վերանորոգման
11	«Քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	Կասնոյի փողոց	1980	5210, 0	Մանկապարտեզի շենքը վերանորոգված է	
12	«Քաղաքի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք	Օրբելի փողոց	1982թ.	1296, 0	Վերանորոգվել է մանկապարտեզի շենքի տանիքը: Այն չի ջեռուցվում	Մանկապարտեզի մասնաշենքը ենթակա է հիմնավոր նորոգման
13	«Շառլ Ազնավուրի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենք	Օգոստոսի 23 փողոց	1982թ.	6429	Տանիքը գտնվում է անմխիթար վիճակում, որը թույլ չի տալիս ամբողջությամբ շահագործել շենքը: Այդ պատճառով ստեղծվել է վթարային վիճակ	Հիմնավոր նորոգման կարիք ունի

